ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2023/84

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2023 թ. N 84

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Հովսեփ Արղության փող.,1 շենք

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023թ.ապրիլի 14-ին քննարկեց «Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԵՊՀՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	02 մարտի 2022 թ.
ինքնավերլուծության ներկայացում	17 հունիսի 2022 թ.
փորձագիտական այցի իրականացում	31.09-01.11 2022 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	11 հունվարի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	01 մարտի 2023թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ «Կառավարում և վարչարարություն» և «Որակի ներքին ապահովման համակարգ», գնահատվել են անբավարար:
Հանձնաժողովը, ուսումնասիրելով Երևանի պետական հումանիտար քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ԵՊՀՔ-ն իրականացնում է իր առաքելությանը համապատասխան, պահանջարկ վայելող ՄԿԾ-ներ, որոնք, ըստ վերջնարդյունքների, համապատասխանում են ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին:
ՄԿԾ-ների բարելավման հիմքում ընկած են գործատուների առաջարկները, առկա են արդյունավետ գործարկվող դուալ կրթական ծրագրեր, ուսանողների շարժունության օրինակներ: Ընդգրկուն է ընտրովի առարկաների ցանկը, կարևորություն է տրվում օտար լեզուների իմացությանը:

Առկա են ուսանողների ինքնուրույն մտածողությունը և հետազոտական կարողությունները զարգացնող հանձնարարականներ: Առաջադրանքներում հիմնականում առկա են համեմատական վերլուծություններ, դեպքերի ուսումնասիրություններ, գործնական վարժանքներ, դերային խաղեր, որոնք նպաստում են ուսանողների՝ սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը:
Քոլեջը չունի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական մոտեցում, սակայն դասախոսների մեծամասնությունն առաջնահերթություն են տալիս ինտերակտիվ և ուսանողակենտրոն մեթոդների կիրառմանը:
Հատկապես դրական է դուալ կրթական ծրագրերի փորձը, որի տարածման և ինստիտուցիոնալացման ուղղությամբ *ՄՈՒՀ-ը* քայլեր է ձեռնարկում:
ԵՊՀՔ-ն ունի դասախոսական կազմի ընտրության քաղաքականություն, ունի հիմնականում կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, դասավանդողների խրախուսման դրական փորձ, երիտասարդ կադրերի օժանդակության քաղաքականություն, պրակտիկ դասավանդողներ, մասնագիտական ներուժ: Քոլեջը կանոնակարգված աջակցություն է ցուցաբերում սկսնակ դասավանդողներին՝ նրանց կցելով մենթորներ, կարևորում է դասախոսների կատարելագործմանն ուղղված միջոցառումները, այդ գործընթացների համար 2022 թվականի նախահաշվով առանձնացված է ֆինանսական հատկացում:

Քոլեջը կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան ենթակառուցվածք, անհրաժեշտ ռեսուրսներ, ապահովել է նպաստավոր ուսումնական միջավայր, իր զարգացման ծրագրում ներառել և կարճ ժամկետում որոշ մասով իրականացրել է բարենորոգման մի շարք աշխատանքներ, թարմացրել է ռեսուրսային բազան:

ՄՈՒՀ-ում գործող կրթական ծրագրերը, պրոֆեսորադասախոսական կազմն ու նյութատեխնիկական հագեցվածությունը հիմնականում ապահովում են արդի, գործնական հմտություններով, գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստումը:

2. *Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը*

Քոլեջի զարգացման ծրագրի ժամանակացույց-պլանով սահմանված նպատակադրումները բխում են հաստատության առաքելությունից, որի հիմնական բովանդակությունն է միջին մասնագիտական կրթության ոլորտի բարձրորակ կադրերի պատրաստումը:

Քոլեջի կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվել են վարչական-կառուցվածքային որոշ փոփոխություններ, սակայն կառավարման համակարգի արդյունավետության վերլուծություն չի կատարվել: Որոշումների կայացումը նույնպես դեռևս տվյալահեն չեն:

Կառավարումն առավելապես ուղղված է ամենօրյա ընթացիկ խնդիրների կարգավորմանը, սակայն ո՛չ ռազմավարական կառավարմանը. չեն դրվում խնդիրներ, որոնք տանում են դեպի զարգացում:

ՈԱ համակարգը քոլեջում դեռևս ձևավորման փուլում է, ՈԱ պատասխանատուի գործառույթները հստակեցված չեն, առկա չեն գործընթացների արդյունավետության գնահատման, վերլուծությունների, խնդիրների վերհանման մեխանիզմներ, սահմանափակ է վերլուծությունների ազդեցությունը որոշումների կայացման ուղղությամբ, որակի ապահովումը դեռևս ազդեցություն չունի ընդհանուր կառավարման, ինչպես նաև կրթության, հետազոտության որակի լավարկման և որակի բարելավման ուղղությամբ:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը:*

ԵՊՀՔ-ում գործում են դիմորդների հավաքագրման որոշակի մեխանիզմներ, որի արդյունքում դիմորդների աճ կա: Ուսանողների կարիքների վերհանման նպատակով քոլեջում կիրառվում է կարգավարների ինստիտուտը, գործում են օտար լեզուների ուսուցման անվճար խմբակներ, կարիերայի կենտրոնը, որի գործունեությունը ուսանողներին որոշակիորեն հնարավորություն է տալիս ծանոթանալ աշխատաշուկային, ինչպես նաև ապահովել շարունակական կրթություն: Սակայն Կարիերայի կենտրոնի գործունեությունը համակարգային բնույթ չի կրում:

Մասնագիտություններից մեծ մասում ուսանողներին տրվում են հանձնարարականները ներառում են վերլուծական, ստեղծագործական մտածողությունը զարգացնող տարրեր, փորձ է արվում փոխկապակցել հետազոտական և ուսումնական գործընթացները: Հետազոտական ուղղության զարգացման համար հատկացվում են որոշակի ֆինանսական միջոցներ:

ԵՊՀՔ-ն համագործակցում է մի շարք արտասահմանյան և չորս տասնյակ տեղական կազմակերպությունների հետ, ինչը դրական է անդրադառնում կրթական ծրագրերի որակի, դրանց

պրակտիկ բաղադրիչի զարգացման վրա: Քոլեջն ունի ուսանողական փոխանակման միջազգային ծրագրեր իրականացնելու հաջողված փորձառություն, որտեղ օտար լեզուների դասավանդումը դիտվում է առաջնահերթություն և հաջող ընթացք ունի:

ՄՈՒՀ-ում իրականացվող հետազոտական, ստեղծագործական միջավայրը, միջազգայնացումը, արտաքին կապերը և շահակիցների հետ հետադարձ կապը զարգացման և առաջխաղացման հնարավորություններ ստեղծում են. ինչպես միջազգայնացումը, այնպես էլ հետազոտական գործունեությունը նպաստում են կրթական ծրագրերի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
   - Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը,
   - դասախոսների գնահատման համապարփակ գործիքակազմի կիրառմանը,
   - դասախոսների մասնագիտական վերապատրաստումների համապարփակ ծրագրի մշակմանն ու ներդրմանը՝ հիմնվելով կարիքների գնահատման վրա,
   - բոլոր ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի զարգացմանը նպաստող հանձնարարականների ավելացմանը՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները,
   - ներքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականության համակարգի բարելավմանը,
   - որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացմանը, քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի

պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:

4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Երևանի պետական հումանիտար քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ
2023 թ. ապրիլի 28
ք.Երևան

Ա. Սաղյան